

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ընթացից Նոր-Նախիջևանայ և Բեսսարարիոյ թեմական դպրանոցի վասն 1890—91 ուսումնարանական ամին, տուեալ խորհրդարանի Հոգաբարձուաց ի Տեսչէ նորին ի Պալուստ Սարապետեան Չարիխեանէ:

Սատուցանելով մեծարոյ Հոգաբարձութեանդ մեր թեմական Դպրանոցի 1890—91 ամի ուսումնական ընթացից տեղեկագիրը, հարկ կհամարիմ՝ յիշել թէ ի նկատի առնելով, որ այս տարի կլրանայ նորա գոյութեան տասնամեայ շրջանը՝ ոչ աւելորդ վարկայ ակնարկ մի ձգել և այդ շրջանի վերայ, ուստի և տեղեկագրիս յարակցեցի համառօտ տեսութիւն և այդ անցեալ տասնամեայ շրջանի վերայ ևս, յուսալով թէ հաղորդած տեղեկութիւններս կարող են արգասաւոր լինել ապագայի համար: Արուհետեւ մարդ մը, երբ օր աւուր աշխատանքի հետ լինի և ուշքը դարձնէ միայն այն հանգամանքի վերայ, որ իւր սլարտքը արդարապէս կատարէ, շատ անգամ բուն նպատակը աչքէ հեռացնելով կկորցնէ և անտի առաջ կուգան զանազան խոչընդոտներ, ինքն ալ կխտտորի ուղիղ ճանապարհէն և այդպիսով կխափանուի նպատակի իրագործումը: Այս պատճառաւ շատ օգտակար է և միանգամայն կարեւոր՝ եթէ գործակատարութեան միջոց մարդս առ ժամանակ մի դադար առնու, հայեացք մը ձգէ իւր անցեալ գործունէութեան վերայ և ի կշռի դնէ թէ ո՞րքան արդեօք ստացած արդիւնքը բաւական է նպատակին հասնելու համար, որպէս զի կարողանայ օգուտներ քաղել և կատարեալ անել նպատակի իրագործումը: Բայ յայնմանէ, երբ որ մարդս ուշք կդարձնէ իւր ան-

ցած գործունէութեան վերայ և ակներե կոտեսէ, որ ժամանակը ի զուր անցուցած չէ և արգասաւոր եղել են աշխատանքն ու ջանքը՝ այն ժամանակ կարծես մի առանձին մխիթարութիւնով կլցուի նորա սիրտը և ի նորոյ կողմորուի, եթէ թուլանալ ևս սկսած լինի իւր գործունէութեան մէջ, զանազան արգելքներու հանգիպելով՝ նոր այժ և զարութիւն կստանայ եռանդը կրկնապատկելու, որպէս զի հասնի ընտրած բարի նպատակին: Ինչպէս որ գպրոցի մէջ ուսման ժամանակ անցած առարկաներու կրկնութիւնը կարեւոր է շատը նայն առարկաներու գիտութիւնը յիշողութեան մէջ զարթեցնելու համար, որպէս զի և միւս անցած առարկաներու մէջ կապ մը ստանանուի, այնպէս ալ կեանքի ամեն ասպարիզի գործակատարութեան մէջ պէտքէ յայտնի շրջան անելէն ետքը՝ ակնարկ մը ձգել անցեալի վերայ և խորհել թէ ուղիղ է արդեօք ընտրած ճանապարհը որոշած նպատակին հասնելու համար, յուսալի՞ են գործածած միջոցները, թէ հարկաւոր է ուրիշ միջոցներու գիմել և ընտրել այլ ճանապարհներ: Ահա սոյն այս խորհրդածութիւններն անելով, հարկ համարեցի ակնարկ մը ձգել և մեր Դպրանոցի անցեալ տասնամեայ գործունէութեան և ընթացից վերայ, որպէս զի կարելի լինի կարեօք չափ օգուտ քաղել անցած անցքերէն և հոգալ առաջակայում հարկաւորը նորա զարգացմանն ու բարգաւաճմանը համար:

Այսպիսի դիտաւորութեամբ այս խորհրդաւոր բոլէիս՝ ներկայանալով Ձեր առաջ, Մեծարոյ Տեաքք, ուրախ եմ ի սրտէ շնորհաւորել մեր կրթական հաստատութեան տասնամեակը, և հրապարակաւ վկայել, որ թէպէտ տասն տարին մի մեծ շրջան չէ որ և է հաստատութեան համար, բայց և այդ կարճ միջոցում մեր Դպրանոցը կարողացել է ակներե ցուցանել իւր արգասաւոր գործունէութեան անփխտելի արդիւնքները:

Մեր Դպրանոցի կոչումն է պատրաստել ընդհանրապէս բոլոր թեմի և մասնաւորապէս մեր քաղաքի համար արժանաւոր հոգեւոր հովիւներ, խոհուն և ձեռնհաս ուսուցիչներ ծխական դպրոցաց համար և տալ մեր հասարակութեան պիտանի անդամներ: Իւր այս տալը տարուայ ընթացքում մեր Դպրանոցը, համարձակ կարող եմ

ասել, աշխատած է միշտ խղճի մօտը հետևել այդ սուրբ նպատակին և ամենայն բարեխղճութեամբ կատարել է իւր բարոյական պարտքը հայ հասարակութեան առաջ: Իբրև ապացոյց խօսքիս, ես առիթ կունենամ մէջ բերել յարմարաւոր դէպքում կարեւոր փաստեր, իսկ առ այժմ՝ կանցնեմ նկարագրելու Գպրանոցիս կացութեան պայմանները նորա սկզբնաւորութենէն մինչև մեր օրերը:

Ինչպէս յայտնի է, մեր Գպրանոցի նախորդը, նորա աւագ եղբայրն եղած է նախկին Հոգեւոր Գպրոցը, որ 1875 թուի Սեպտեմբեր ամսին բացուելով՝ քաղաքումն Հոգեւոր Բարձրագոյն Խշխանութեան թոյլտուութեամբ՝ անխափան շարունակած է իւր գոյութիւնը մինչև 1881ը, թուական՝ երբ կայսերական հրամանով փոխադրուեցաւ թեմական Գպրանոցի: Այդ Գպրոցը իւր ժամանակին բաւական արդիւնաւոր է եղած, իսկ վերջին տարիները գլխաւորապէս Արքազան Աղափիրեան Գրիգոր Եպիսկոպոսի և մասամբ պ. Փ. Վարդանեանի տեսչութեան օրով և սոցա ջանքով, թէ ուսման ծրագրի նկատմամբ և թէ առհասարակ իւր ներքին բարեկարգութեամբ հասած է նշանաւոր յաջողութեան: Այդտեղ են պատրաստուած այդ միջոցին մի խումբ յառաջագէտ աշակերտներու, որոցմէն յետոյ կազմուած է Գպրանոցի բարձր դաստրանաց նշանաւոր կոնտիգենտը: Սոյն Հոգեւոր Գպրոցը, տարեց տարի բարւոքելով ամենայն մասամբ իւր ուսումնական վիճակը, առիթ է տուած մեր հասարակութեան ձգտելու աւելի բարձր նպատակի, որ և իրագործուած է վերջապէս Հոգեւոր Բարձր Խշխանութեան ձեռքով: Ահա այդ ձգտման լրումն եղաւ, երբ 1881 թ. Նոյեմբերի 8 ին Նախիջևանի և Բեսարաբիոյ Հոգեւոր Գպրանոցը, մեր բարեխնամ Կառավարութեան թոյլտուութեամբ, բացեց իւր հիւրընկալ դռները քաղաքիս ուսումնածառաւ մանկանց առաջ, գոհացնելով միանգամայն մեր հասարակութեան մէջ վաղուց հետէ զգացուած միջնակարգ գրգռոցի պահանջը: Մեր ժողովուրդը ապրելով ներկայ լուսաւոր դարում և շփուելով քաղաքակիրթ հասարակութեանց հետ, վաղուց հասկացած էր կրթութեան դատարարակիչ նշանակութիւնը և այդ էր պատճառը, որ ասկէ շատ տարիներ առաջ Նոր—Նախիջևանը տասնեակներով սաներ է տուած թէ Լազարեան ճեմարանին և

Թէ խալիպեան դպրոցին, չնայելով որ այդ կրթական կենդրոնները Թէ իւրեանց հեռաւորութեամբ և Թէ մեծ մեծ ծախքերու պատճառաւ յարմար չեն եղած այդ նպատակի համար և սակաւ մատչելի: Լազարեան հռչակաւոր ձեմարանը իւր ժամանակին մեծ օգուտ է տուած մեր հասարակութեան, բայց արդի ձեմարանը չունի իւր նախկին նշանակութիւնը մեր քաղաքացւոց համար, ուստի և նորա մէջ ուսանող Նախիջևանցոց թիւը այժմ շատ սահմանափակ է, եթէ չեմ սխալուիր, միայն 5 հոգի են: Ինչ որ կը վերաբերի խալիպեան դպրոցին, պէտք է խօստովանել, որ նա ևս Թէպէտ ունեցաւ իւր համեմատական արդիւնքը, բայց դժբաղդաբար իւր գոյութիւնը երկար չտևելուն պատճառաւ, չկարողացաւ նշանաւոր ծառայութիւն մատուցանել մեր հասարակութեանը: Խալիպեան ուսումնարանի ինչքը՝ նորա հոյակապ շէնքը և մեծածախ տպարանը բաժին հասաւ մեր դպրանոցին, որ ստանձնեց իւր վերայ ամբողջ Թեմի հայ հասարակութեան նկատմամբ և նորա բարոյական կաշումը, որքան դա կը համապատասխանէր նորահաստ գպրանոցի նպատակներուն:

Դպրանոցի սկզբնաւորութեան վերայ խօսք բանալով, բարոյական պարտք կը համարիմ յիշեցնել Զիզ, Յարգելի պարոններ, այն պատկառելի անձի անունը, որի հայրական խնամքին և անդուլ ջանքերուն պարտական ենք մենք գլխաւորապէս մեր դպրանոցի գոյութեամբ, այն է մեր հանգուցեալ Գէորգ Գ. աղգասէր կաթողիկոսի: Նորա շատ ուրիշ փայլուն գործոց շարքում ոչ պակաս տեղ կը գրաւէ և մեր դպրանոցը, որի բացումը իրագործած է նա բազում արգելքների յաղթելով:

Գեռ խալիպեան դպրոցի փակման միջոցին երջանկայիշատակ Սոստափառ Մեծ Կայսր Աղեքսանդր II - ր բարեհաճած էր հրամայել, որ նոյն ուսումնարանը փոխադրուի Թեմական դպրանոցի, նորա շէնքը յատկացուի Աղգիս ընդհանրական Հայրապետին: Այդ խորհրդաւոր օրէնն ի վեր աղգասէր Հայրապետը անխոնջ հետևողութեամբ և մեծ հաստատամտութեամբ վերաբերած է այդ խնդրին: Հոգալով նախապէս ապահովել դպրանոցի անխափան պահպանութիւնը հաստատուն հասոյթներով և պէտքին պէս կարգադրելով դոյն

խնդիրը, հանգուցեալ Հայրապետը ամեն կերպ աշխատած է ընդունելի կացուցանել իւր առաջարկութիւնը Տէրութեան առաջ և հաստատել տալ թեմական դպրանոցի համար իւր կազմած կանոնադրութիւնը: Նորա անդուլ ջանքերը վերջապէս իրականացնել իւր վաղուցուայ ջերմ ցանկութիւնը, ընծայելով մեր թեմի ժողովրդին մի միջնակարգ հոգեւոր դպրոց, որ կատարելապէս պիտի համապատասխանէր ժողովրդի էական պահանջներուն: Եւ յիրաւի, նոր բացուելի դպրանոցը՝ ունենալով իւր ծրագրի մէջ միւս տարրական գիտութեանց շարքում և լատին լեզուն, պիտի գոհացնէր մասամբ ժողովրդի և այն դասակարգի պահանջը, որ կուեակից էր կլասիքական կրթութեան:

Նոյն բարոյական պարտքը կստիպէ ինձ յաւելուլ, որ այս սուրբ գործի մէջ հանգուցեալ Գէորգ Գ. ազգասէր Հայրապետին արժանաւոր աջակից և բանիբուն գործակից է եղած երջանկայիշատակ Տ. Մակար կաթողիկոսը, որ 1881 թուակ. յիշակաւոր Առաջնորդ էր թեմիս: Նոյն ամի Մայիս ամսին գալով Նոր-Նախիջևան և շարունակ ամիս ու կէս զբաղուելով դպրոցի խնդիրներով, նորին սրբազնութիւնը չէ զլացած այդ առթիւ խորհրդակցիլ բանիմաց անձանց հետ՝ օգտուելու նոցա հայրենասէր ձեռնառութենէն, և ապա անձամբ հասու լինելով՝ ամենայն հանգամանաց և հիմնաւորապէս որոշելով դպրանոցի ապագայ եկամուտները, կարեւոր կարգադրութիւններ է արած և նախապատրաստած է ամենայն ինչ թեմական դպրանոցի պաշտօնական բացման համար:

Այս խորհրդաւոր հանդիսին, յիշելով Գպրանոցի բազմերախտ հիմնադիրներու անունները և պատուելով նոցա յիշատակը, մաղթենք Աստուծմէ, որ ազգիս նոր ընտրելի Հայրապետը ևս նոյն սէրն ու խնամքը ընծայէ մեր նորաբողբոջ հաստատութեան, որ պիտի ընծայած էին նախորդ երկու երջանկայիշատակ մեծ Հայրապետները:

Գարձեալ երախտագիտական պարտքը կստիպէ ինձ հրապարակաւ յայտնել մեր խորին գոհունակութիւնը և այն պատուաւոր անձանց, որոնք նոյն իսկ գործի մէջ իւրեանց շրջանկաւ խորհուրդներով նպաստած են հոգեւոր իշխանութեանը դպրոցի բացման

խնդրին հիմնաւոր ընթացք տալու, հոգ տանելով նաեւ նորա նիւթական ապահովութեանը վերայ:

Աւելորդ համարելով մի առ մի յիշել դոցա անունները, չեմ կարող չդարձնել Ձեր ուշադրութիւնը նաեւ այն ուրախալի երեւոյթին վերայ, որ ներկայ Հոգաբարձութեան մեծամասնութիւնը իւր յարգելի նախագահոյ, բազմարդիւն և բազմաշխատ գործաւարտ և ժրաջան անդամներով դպրանոցի բացման ջերմ կուսակիցներ լինելով՝ գործակից են եղած դպրոցի հիմնարկութեանը, և այսօր տասը տարի անցնելէն վերջը, բաղդի բերմամբ, նորէն կանգնած են այդ կրթական գործի գլուխը:

Այս պակաս ուշադրութեան արժանի է և այն հանգամանքը, որ ներկայ Հոգաբարձութիւնը կազմուած է գլխաւորապէս երկու միմեանց արժանաւորապէս լրացնող տարրերէ, նորա մէկ մասը կկազմեն հասարակական գործունէութեան ասպարիզում փորձուած անձինք, միւս մասը կկազմեն կրթուած երիտասարդներ, որոնք ծանօթ լինելով դպրոցական արդի գործիչ մանկավարժութեան պահանջներուն, ունին միջոց հսկել և ուսման ընթացքի վերայ:

Մեր դպրանոցը իւր գոյութեան առաջին օրէն վայելած է հասարակութեան բուռն համակրանքը, որը ապահովացրած է նորան որոշ գումար յատկացնելով մօտ 7000 բուլքի ի հասարակական եկամտից: Հոգեւոր իշխանութիւնը ևս իւր կողմանէ նպաստներ որոշած է եկեղեցական գումարներէն այնքան, որքան կարող էր նշանակել նոցա եկամուտներուն նայելով, և չէ անյայտ, որ նոյն իսկ բացման հանդիսի օրը ներկայ Հոգաբարձութեան յարգելի նախագահի առաջարկութեամբ, որ այն ժամանակ ևս Հոգաբարձութեան անդամի պաշտօն կրէր, հանգանակեցաւ մի նշանաւոր գումար և դպրոցի հիմնական և աշակերտական մատենադարանի համար:

Դպրոցական մատենադարանի կարեւորութիւնը պարզ է, նա սերտ կապ ունի դպրոցի բարգաւաճման խնդրի հետ և իսկապէս կոչուած է լրացնել ուսման գործը: Այդ իսկ պատճառաւ ցաւ ի սիրտ ստիպուած եմ խոստովանել, որ այդպէս գեղեցիկ սկսուած

գործը, հանգամանքներու շնորհիւ, սխալ ուղղութիւն ընդունեց
և մենք մինչև օրս զուրկ ենք դպրոցական պատշաճաւոր մատենա-
դարանէ, որ անշուշտ կարող էինք ունենալ, եթէ դպրոցի կա-
րեաց համեմատ գործադրուէր այդ նպատակի համար հանգանա-
կած գումարը:

Ուրիշ անգամ ևս առիթ եմ ունեցած տեղեկագրիս մէջ խօսել
այս հանգամանքի վերայ, և եթէ այժմ դարձեալ կյարուցանեմ
նոյն խնդիրը, պատճառն անշուշտ դորա կարևորութիւնն է:

Մեր այժմեան մատենադարանի վերայ գոնէ մի մերձաւոր գա-
ղափար տալու համար այսքանս կասեմ, որ նա սակաւ բացառու-
թեամբ, կազմուած է տիրապէս Մխիթարեան ուխտի հրատարա-
կութիւններէն:

Խօսք չկայ, որ դոցա մէջ կան և շատ հիմնաւոր աշխատութիւն-
ներ, կան և կլասիքական գրութեանք, բայց միւս կողմէն պակաս
չեն և այնպիսի հնացած անբովանդակ գրքեր, որոնք առանձին
արժէք մը չունին, մանաւանդ դպրոցական մատենադարանի համար
և բոլորովին աւելորդ բալլաստ կրկազմեն: Ինքն ըստ ինքեան պարզ
է, որ հիմնական մատենադարանի պահանջները բազմակողմանի են
և լոկ վնենտկեցոյ հրատարակութիւնները, որքան ալ կատարեալ
լինին, չեն կարող այդ պահանջները լրացնել: Որքան որ պակասաւոր է
գրադարանի հիմնական բաժինը, կրկին անգամ աւելի աղքատ է
նորա մանկական մասը, մենք չունինք միջոց աշակերտաց ընթերցա-
սիրութիւնը զարգացնելու. մեր ունեցած մանկական գրքերու
թիւը այնչափ սահմանափակ է, որ թէ մեծ ու թէ փոքր տղայք
կկարգան, համարեա միւսնոյն գրքերը, մինչդեռ կարելոր է, որ իւ-
րաքանչիւր հասակի համար որոշ բաժիններ ունենանք, որպէս
զի կանոնաւոր ուղղութիւն տրուի տղայոց մտաւոր զարգաց-
մանը:

Այսօր նորէն խօսելով այս խնդրի վերայ, կ'ստահանամ յու-
սալ, որ յարգելի Հոգաբարձութիւնը իրեն յատուկ պատրաստու-
կանութեամբ օգնութեան ձեռք կկարկառէ մեզ այս կարևոր
խնդրում, կարելոյն չափ բարւոքելով մեր աղքատիկ մատենադա-
րանը: Այսքան բաւական համարելով մատենադարանի խնդրի

Նկատմամբ՝ կշարունակեմ խօսքս Գպրանոցի ընդհանուր ուղղութեան վերայ:

Նորաբայ Գպրանոցի Հոգաբարձութիւնը, գպրոցի նիւթական վիճակը կարեօք չափ ապահոված համարելով, բնական է, որ պիտի խորհէր բարեօքելու և նորա ուսումնական մասը յանձնելով նորա տեսչութիւնը մի հմուտ ղեկավարի ձեռք: Հոգեւոր գպրոցի նախկին Տեսուչ Պ. Փ. Վարդանեանը, Վեհափառ Գէորգ Գ. Կաթողիկոսի հրամանով, Գէորգեան ձեմարանի դասատու նշանակուելով, չէր կարող ստանձնել գպրանոցի կառավարութեան գործը. ուստի հարկ եղաւ այդ կարեւոր պաշտօնի համար հրաւիրել մի ուրիշ յարմարաւոր անձն: Այդպիսի հանգամանքներում Հոգաբարձութիւնը պատշաճ կհամարէ դիմել Արժ. Զարիֆեան խաչատուր ա. քահանային, և խնդրել որ գոնէ ժամանակաւորապէս յանձն առնու Գպրանոցի ղեկավարութիւնը, մինչև որ այդ պաշտօնին համար կառնէ իւր արժանաւոր ընտրութիւնը: Հայր Զարիֆեանը երկար տարիներ քաղաքիս գպրոցներում կրօնուսուցի պաշտօն վարելով, իբրեւ փորձառու անձն կարեօք չափ կկառավարէ իրեն տեսչութեան յանձնուած գպրոցը 1881—1882 ուսումն. տարւոյ ընթացքում: Արժ. հօր տեղեկագրէն, որ «Նախագիտելիք» մակագրով տալագրութեամբ լոյս ընծայուած է Գպրանոցի կանոնադրութեան հետ միասին, կերեւայ որ վիճակիս թեմական հոգեւոր Գպրանոցը, իւր գոյութեան առաջին տարուայ ուսումնական շրջանին մէջ, քաղաքի հանգամանայ նայելով, ունեցած է միայն երկու Գպրանոցական դասարաններ, այն է՝ առաջին և երկրորդ և երեք նախակրթարանաց բաժիններ, ստորին, միջին և բարձր: Աշակերտաց թիւն էր առաջին դասարանի մէջ 21, երկրորդին՝ 20, նախակրթարանի ստորին բաժնի մէջ 29, միջին՝ 37, և բարձր 45, ընդ ամենայն 152 հոգի: Երկու Գպրանոցական դասարանաց մէջ աւանդելի առարկաներն էին՝ Կրօն, լեզուներ՝ Հայոց, Ռուսաց, Լատինաց, Գաղղիացւոց և առարկայք՝ Թուաբանութիւն, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Գծագրութիւն, Գեղագրութիւն, Երգեցողութիւն և մարմնամարզութիւն: Իսկ նախակրթարանաց մէջ՝ կրօն, հայոց և ռուսաց լեզուներ, Թուաբանութիւն, գիր և երգեցողութիւն:

Ուսմանց բովանդակութիւնը եղած է ըստ կարի արքունի միջնակարգ ուսումնարանաց ծրագրին համաձայն:

Այս տեղեկութիւնները մենք քաղուածօրէն մէջ բերինք կանոնադրութեան «Նախագիտելիք» բաժնէն: Նոյն տեղեկագրէն կիսմանք, որ Դպրանոցի ուսուցիչներ նշանակուած են ժամանակաւորապէս Հոգեւոր Դպրոցի նախկին դասատուները, որոց փոխարէն վարչութիւնը մտադրութիւն է ունեցած հրաւիրել ժամանակին, այսինքն աւելի բարձր դասարաններ բացուելուն պէս, բարձրագոյն ուսումնարաններէ աւարտած և աւելի բանիբուն վարժապետներ:

Այդ գեղեցիկ մտադրութիւնը, ինչպէս յայտնի է, Դպրոցի ներկայ վարչութիւնը արդէն իրագործած է: Դպրանոցի Հոգաբարձութիւնը, խորհելով յարմարաւոր Տեսչի ընտրութեան խնդրի վերայ, երկար խորհրդածութիւններէ յետոյ, որոշած է հրաւիրել յիշեալ պաշտօնը վարելու Հայ հասարակութեան մէջ մասնագէտ մանկավարժի հուշակ ունեցող, այժմ հանգուցեալ, Առաքել Բահաթրեանին, որ աւարտած լինելով Վաղարեան ճեմարանի լիկեոնը, երկար տարիներ արտասահմանի նշանաւոր համալսարաններում մասնագիտաբար ուսումնասիրած էր տեսական և գործնական մանկավարժութիւն:

Հանգուցեալ Բահաթրեանը, ընդունելով Հոգաբարձութեան հրաւերը կշտապէ վաղօրօք, ամառուանէ ժամանել Նոր-Նախիջևան և 1882—83 ուսումն. տարւոյ սկզբին մի շարք ժողովներու մէջ ուսուցչաց գործակցութեամբ կսահմանէ ուսման մանրամասն ծրագիրներ երեք պատրաստական և երեք դպրանոցական դասարանաց համար:

Ուսուցչաց ժողովի սահմանած սոյն այս ծրագիրը յարմարեցուցած էր ըստ կարելոյն միջնակարգ Դպրոցի կարեաց համաձայն և նոր պահանջներ բովանդակելով իւր մէջ ընդունուած էր իբրև ժամանակաւոր փորձի համար:

Ճրագրի գործադրութիւնը մասամբ թեթեւացնելու մտք, հանգուցեալ Բահաթրեանը յօրինած էր նաև, համարեա իւրաքանչիւր առարկայի համար օրինակելի դասեր, որոնք կարող էին ծառայել ուսուցչաց իբրև ուղեցոյց:

Պէտք է խոստովանել, որ շատ մեծ աշխատանք է գործ դրած հանգուցեալը ուսման ծրագրի և դասերու մշակութեան վերայ և մեծ հմտութեամբ է կատարած իւր գործը: Բաւական չհամարելով յիշեալ գրաւոր մանրամասնօրէն մշակուած ծրագիրը, իւր առաջագրած նպատակի յաջողութեանը համար, նա անձամբ առաջնորդած է նախակրթարանի ուսուցչաց առաջին անփորձ քայլերը:

Այսպիսի օրինակելի եռանդով սկսուած գործը անշուշտ պիտի բերէր և զգալի արդիւնքներ, ուստի մեզ կմնայ միայն ցաւել, որ հանգուցեալ Բահաթրեանի շահաւէտ ծառայութիւնը Նախիջևանի Դպրանոցին կարճատեւ եղաւ, մի տարի անգամ չտեւեց, և ազգային կրթութեան անդաստանը շատ շուտ զրկուեցաւ իւր անձնուէր մշակէն, նորա հիւանդութեան և ապա վերահաս մահուան պատճառաւ:

Այնուհետեւ, ինչպէս յայտնի է 1883—84 ուսումն. տարւոյ սկզբէն Դպրանոցի ղեկավարութիւնը կ'յանձնուի նուազօրէն: Թողնելով ուրիշներուն դատել իմ գործունէութեան վերայ, ես միայն կրեաւականանամ մատնացոյց անելով այն հանգամանաց վերայ, թէ իմ տեսչութեան օրով Հոգաբարձուաց խորհրդարանի հաւանութեամբ և ուսուցչաց ժողովի գործակցութեամբ եղել են այն ամենայն կարեւոր կարգադրութիւնները, որոնք յայտնի բնաւորութիւն են հաղորդած մեր Դպրանոցին և որոշած են նորա այս կամ այն ուղղութիւնը, որ ունի նա այս օրս:

Յայտնի է ամենքին, որ մեր քաղաքի հասարակութեան մի որոշ մասը ցանկացած է մեր Դպրանոցին կլասիքական Դպրոցի ուղղութիւն տալ, որպէս զի սա կարող լինի ծառայել թէ իւր գլխաւոր նպատակին և թէ ժողովրդի հարուստ դասակարգի շահերուն:

Հոգաբարձութեան անդամները, սոյն այս ուղղութեան հետեւող լինելով՝ շատ անգամ առիթ են ունեցած արծարծել այդ խնդիրը իւրեանց ժողովներու մէջ, և ես կարեօք չափ նպաստած եմ այդ նպատակին հասնելու:

Կլասիքական գլխաղիտնի համեմատութեամբ, մեր Դպրանոցի ծրագրէն գլխաւորապէս կպակասէր Յունաց լեզուն, որ և Հոգա-

բարձութիւնը մնաւ էր ներմուծել դասաւանդելի առարկայից շարքը:

Այդ լեզուի դասերը բաւական ժամանակ աւանդուեցան Գպրանոցում և անշուշտ պիտի կարողանային ծառայել իրենց նպատակին, եթէ Հոգեւոր բարձրագոյն իշխանութեան կողմէն արգելքի չհանդիպէին:

Կատարուեցան հեղհեռէ կարեւոր բարենորոգումներ Գպրանոցի մէջ, լրացաւ Գպրանոցական դասարանաց թիւը, կազմակերպեցաւ ուսուցչաց նոր խումբը, որոյ աշխատութեամբ մշակեցաւ Գպրանոցիս ուսման ծրագիրը, որ և հաստատութիւն գտաւ Վեհափառ Կաթողիկոսէն, ձեռք բերուեցան ուսումնական կարեւոր պիտոյքներ, նամանաւանդ ֆիզիքական հարուստ թանգարան, գործադրուեցան քննութեանց նոր և նպատակայարմար եղանակ և ցայսօր արձակուեցաւ 4 խումբ շրջանաւարտ աշակերտներ:

Սոքա այնպիսի հանրաժանօթ փաստեր են, որ աւելորդ կհամարիմ երկարօրէն կանգ առնել գոցա մերայ:

Ներկայումս մեր Գպրանոցը ունի երեք պատրաստական և մեկ Գպրանոցական դասարաններ, որոց մէջ բացի միջնակարգ Գպրոցի դասընթացը կազմող առարկաներէն, կաւանդուին նոյնպէս և Աստուածաբանական գիտութիւններ:

Գպրանոցը ունի ֆիզիքական մի շքեղ թանգարան, որ կատարելապէս կգոհացնէ աշակերտաց կարիքը, ունի նոյնպէս հիմնական և աշակերտական մատենադարան, որ թէ և գոհացուցիչ չէ ինչպէս վերեւ ասուեցաւ, բայց և այնպէս կպարունակէ իւր մէջ ընդամենը 900 ի չափ գիրք, որոնցմէ 124 մատենագրական, 45 թարգմանական, 9 փիլիսոփայական, 17 քերականական, 29 թատերական, 121 կրօնական, 70 պատմական, 47 մաթեմատիկական, 31 տեղագրական, 36 մանկավարժական, 35 բառգիրք, և 30 ի չափ օրագրական, այլ և 300 ի չափ հայերէն և ռուսերէն մանկական գրքեր:

Գպրանոցի ներկայ ուսուցչաց խումբը բաղկացած է 17 անձինքների, որոնց թուում է Տեսուչը և երեք վերակացու, այլ և ունի Գպրանոցը և իւր բժիշկը, որ ձրիապէս կկատարէ իւր պաշտօնը

և արժանի է մեր խորին շնորհակալութեանը, որպիսին է Պ. Քեչեկեանը:

Գալով Գպրանոցի աշակերտաց ընդհանուր թուին, պէտք է ասել, որ սա կոտտանուի 210—230 ի մէջ, այս թուէն 60—80 ձրիաւարժ են և մնացեալները թռչակաւոր:

Թռչակաւորների թուում կան սաներ, բարեգործական հաստատութեանց և մասնաւոր անձանց՝ որպիսիք են սան Մինաս Պալասանեանի և բարեգործական ընկերութեան 32 հոգիք, յորոց 10 ին համար կիճարուին թռչակ, ուսումն. պիտոյք և հանդերձեղէն, իսկ միւս 22 ին միայն ուսումն. պիտոյք և հանդերձ առանց թռչակադրամի: Աշակերտաց գլխաւոր տարրը կազմել են միշտ մեր քաղաքացիք, այնուհետև կհետեւեն գիւղացիք, սակաւաթիւ են և օտարաքաղաքացիք: Այս վերջիններու թիւը վերջին տարիները, կարծես թէ կաւելանայ, և պէտք է յուսալ՝ որ երբ Գպրանոցը գիշերօթիկ դառնայ, աւելի ևս կստուարանայ նոցա թիւը:

Անցնելով աշակերտաց յառաջագիմութեան խնդրին, հարկ կը համարիմ մէջ բերել, թէ Գպրանոցս՝ լրացնելով իւր վեց դասարանաց թիւը, արձակած է ցայսօր չորս խումբ շրջանաւարտ աշակերտներ:

1886—87 ուսումն. տարւոյ շրջանին մէջ Գպրանոցը արձակած է 5 ուսումնաւարտ աշակերտներ. Չաթալպաշեան Սերովբէ, Քելէշահինեան Յովհաննէս, Բեդեւեան Գէորգ, Զարիֆեան Յովհաննէս և Թուսուզեան Միքայէլ. սոցանէ 3ը այժմ ուսուցչութեամբ կպարտպեն, մէկը կշարունակէ իւր ուսումը Գէորգեան Ճեմարանի մասնագիտական բաժնում և մէկը կգրադի մասնաւոր գործերով:

Հետեւեալ տարին Գպրանոցը ինչ ինչ սկստճառներով ուսումնաւարտ աշակերտ արձակած չէ:

1888—89 տարւոյ շրջանին Գպրանոցէն աւարտել են դարձեալ 5 հոգի, Տէր Սարգսեան Օգոսէնտ, Պարգախչեան Յակոբ, Տէր Յակոբեան Պետրոս, Խարիպեան Լուսեղէն և Պաթրեան Գէորգ: Սոցանէ երկուսը կպարտպեն ուսուցչութեամբ, մէկը եկեղեցւոյ պաշտօնեայ է և մնացեալ երկուսը կգրադեն մասնաւոր գործերով:

1889—90 տարւոյ վերջը Դպրանոցի ընթացքը աւարտած են 4 հոգի, ֆեյէկեան Համբարձում, Բեդեկեան Յովակիմ, Բերբերեան Ռուբէն և Ծուռլիզեան Ռափայէլ, որոնցմէ 2ը շատ յաջող կերպով կշարունակեն իրենց ուսումը արքունի դպրոցներում, 1ը արտասահմանի համալսարանում և մէկն ալ կպարապի տպագրութեան արուեստով:

Վերջապէս 1890—91 շրջանին Դպրանոցը արձակած է 3 շրջանաւարտ աշակերտ. Թիթրեան Պետրոս, Ալաճալեան Նեոն և Խարիպեան Կարապետ, որոնցմէ երկուսը ուղևորուել են արտասահման իրենց կրթութիւնը շարունակելու և մէկը կգրադի մասնաւոր գործով:

Արեւմն աւարտողաց ընդհանուր թիւը 17 է, որոնցմէ 3ը կըշարունակեն արտասահմանի համալսարաններում, երկուսը արքունի դպրոցներում, մէկը Գէորգեան ճեմարանում, հինգը ուսուցչական պաշտօն կլարեն, մէկը եկեղեցւոյ տպասաւոր է և չորսը իրենց մասնաւոր գործերով կպարապեն, բոլորովին շատացած համարելով իրենց ստացած դպրոցական ուսմամբը: Ուսուցչութեամբ պարապողներէն երեքը և Գէորգեան ճեմարանում ուսանողը այժմէն իսկ պատրաստ են հոգևորական կոչումն ընդունելու: Ուշագրութեան և մխիթարութեան արժանի է այն հանգամանքը, որ աւարտողաց մեծամասնութիւնը իբրև ուսուցիչներ, հոգևոր պաշտօնեաներ և քաղաքում մասնաւոր գործով զբաղուող անձինք, պիտի մնան իրենց ծննդավայրերում, և ըստ կարեաց իւրեանց պիտի ծառայեն պիտանացու անգամներ հանգիստնալով:

Ահաւասիկ փաստեր, որ ակներև կանեն այն ճշմարտութիւնը՝ թէ մեր Դպրանոցը աշխատած է միշտ խզճի մտօք հետևել իւր սուրբ նպատակին և ամենայն բարեխղճութեամբ կկատարէ իւր բարոյական պարտքը հայ հասարակութեան առաջը, որոյ մասին խօսք արած էի տեղեկագրիս սկիզբը:

Աշակերտաց յառաջադիմութեան մասին գաղափար մի տալու համար ոչ աւելորդ կհամարիմ զետեղել այստեղ երկու ազիւսակ ցուցակ, որոնցմէ ակներև կտեսնուին թէ քանի աշակերտներ ընդունուած են Դպրանոց յընթացս նորա տասնամեայ շրջանին, և յընթացս 1890—91 ուսումն. տարւոյն, որքան փոխադրուած են դատարանէ դատարան և որքան արձակուած:

Յ Ո Ւ Յ Ա Կ

Թուայ աշակերտաց թեւ՝ Գարանայի ըստ դասարանաց վառն 1881 — 1891 տաճնամայ ընթացից:

Գ. Ա. Ս. Ա. Բ. Ա. Ն. Ք.	Թ.	Ի		Ա.	Շ	Ա.		Կ	Ե	Բ	Տ	Ա.	Յ
		Արձակելոց տարւոյն մէջ				Արձակելոց տարւոյն վերջը							
		հոտր -տի տոյժ	հոտր -տի տոյժ			հոտր -տի տոյժ	հոտր -տի տոյժ						
Ատարկն նախակրթ ա. Միջին նախակրթ ա. Բարձր նախակրթ ա. Ա. Դասարան, Բ. Դասարան, Գ. Դասարան, Դ. Դասարան, Ե. Դասարան, Զ. Դասարան,	473	12	2	459	12	7	297	-տոտն վ հիշատար -տն վ նախակրթ	143	304	169	334	
	403	10	3	393	7	3	248	տոտն վ հիշատար -տն վ նախակրթ	135	286	117	81	
	508	21	5	482	6	30	257		189	357	151	63	
	362	14	2	346	18	8	170		150	275	87	20	
	215	22	2	191	13	8	102		68	144	71	4	
	88	6	3	82	3	3	59		20	59	29	3	
	44	1	3	43	2	3	34		7	27	17	3	
	26	3	3	26	3	3	25		1	10	16	3	
	20	3	3	20	1	3	17		2	9	11	3	
	2139	86	11	2042	62	56	1209		715	1471	668	505	

Յ Ո Ւ Յ Ա Կ

Թուոյ աշակերտաց թեմ. Դպրանոցի ըստ դասարանաց յընթացս
1890—1891 ուսումն. ամի:

Դ Ա Ս Ա Ր Ա Ն Ք:	Թ Ի Ի Ա Հ Ա Կ Ե Ր Տ Ա Յ.									
	- հոբել հմտոս	Արձակելոյ սարսյն մեջ		Մեծի հմտոս	Արձակելոյ սարսյն վերջը		հստակ հմտոս	հստակ հմտոս	հստակ հմտոս	հստակ հմտոս
		հոբել հմտոս	հոբել հմտոս		հոբել հմտոս	հոբել հմտոս				
VI	5	»	»	5	1	»	3	1	2	3
V	5	»	»	5	»	»	5	»	1	4
IV	7	»	»	7	»	»	5	2	5	2
III	8	»	»	8	1	»	5	2	2	6
II	24	3	1	20	»	»	12	8	41	13
I	30	2	»	28	»	»	16	12	20	10
Բարձր նախակրթ.	45	3	»	42	»	»	27	15	26	19
Միջին նախակրթ.	54	2	»	52	2	2	31	17	38	16
Ստորին նախակր.	48	2	»	46	2	»	27	17	35	13
Գումար . . .	226	12	1	213	6	2	131	74	140	86

Ինչպէս կերևայ մէջ բերուած այս աղիւսակներէն, թէ նախ-
ընթաց 1890—91 ուսումնական ընթացքում և թէ անցեալ տաս-
նամեայ շրջանին, մեր դպրանոցի աշակերտաց ցոյց տուած յա-

ռաջադիմութիւնը ուսման մէջ բաւականին գոհացուցիչ է, նամանաւանդ եթէ ի նկատի առնունք դպրոցական ընթացքի ծաւալը և համեմատենք պետական միջնակարգ դպրոցներու հետ:

Պատահեցաւ ինձ այս տարի լսել իբր մեղադրանք, թէ ցանկալի է աւելի յառաջադիմութիւն տեսնել Գպրանոցի մէջ և թէ թոյլ աշակերտներ իբրեւ թէ շատ ունի նա:

Արդարեւ կան Գպրանոցի մէջ և տկար աշակերտներ, որոց գրաւոր կամ բերանացի թոյլ պատասխանները աչքի զարնուած են քրնոսութեան ներկայ եղողներուն, սակայն գորանով դատել ընդհանուրի մասին և որոշ եղրակացութեան գալ Գպրանոցի աշակերտներու անյառաջադիմութեան մասին, աւելի քան թէ անտեղի կը լինի:

Քննութիւններու արգասեաց խնդիրը պէտք է հիմնել ընդհանուրի վերայ և սպա ըստ այնմ եղրակացութիւններ անել: Մեր աշակերտները, երբ հարկ եղած է նոցա փոխադրուել պետական Գիմնազիոններ կամ ուրիշ տիպարի դպրոցներ, պատիւ բերել են միշտ այդ դպրոցներուն իրենց յառաջադիմութեամբը, հաւատար ընթանալով իրենց ուսումնական ընթացքում նորդաս ընկերներու հետ: Եւ ի՞նչ կապացուցուի գորանով, ոչ այլ ինչ, բայց եթէ մեր Գպրանոցի աշակերտները կստանան այնքան նախապատրաստութիւն, որ առանց նեղութեան կը մտնեն պետական արքունի դպրոցներ և անխափան կը շարունակեն իրենց ուսումը: Յիշենք այստեղ Բերբերեաններու, Խնձորեաններու, Տէր-Գրիգորեանի, Ռէիզեաններու, Ասմեաններու, Ճիւլեիկեաններու, Բեզեկեաններու, Քիչեկեանի և ուրիշ շատերու, որոնք դուրս գալով Գպրանոցէն մտել են համապատասխան դասարաններ ուսմունք շարունակելու Էջմիածնայ Գէորգեան ճեմարան, Լազարեանց ճեմարան, Բէալական ուսումնարան և Գիմնազիոն (Բոստով և Ստաւրապոլի), չը նայելով այն խիստ պահանջներուն, որ այդպիսի գէպքերում կանուի օտարականներու: Եթէ այդ դպրոցներու մէջ մեր աշակերտներէն եղել են ոմանք և անյառաջադէմներ, եղել են նոքա տկար և թոյլ նաեւ մեզ մօտ: Գպրանոցի թոյլ աշակերտը թոյլ է գտնուել և պետական դպրոցի մէջ, չը կարողանալով շարունակել ուսման ընթացքը, ծուլութեան կամ անընդունակութեանը պատ-

ճառաւ, ինչպէս և Դպրանոցում, ուրեմն կարելի չէ ի մեզս Դպրանոցի վերագրել, որ նորա մէջ կը պատահին և անընդունակ աշակերտներ: Այս ալ ի նկատի պէտք է առնել, որ մեր Դպրանոցը դեռ մանուկ է, նորա տասնամեայ շրջանը մի ուսումնարանական հաստատութեան համար մեծ շրջան չէ և չունի նա նաև այն դրամական ապահով միջոցները, որով օժտուած են պետական ուսումնարանները և որով կարող կը լինին նոքա ընդ առաջ եկած ամեն արգելքներու յաղթելու: Բաւական է ակնարկ ձգել պետական միջնակարգ ուսումնարանի որևէ տիպարի կանխաձեռնի վերայ, և դուք կը տեսնէք ահագին զանազանութիւն 15 կամ 20 հազարի, որ կերթայ յատկապէս այս կամ այն մեզանում նկատուած պակասութիւնները ծածկելու կամ նոյնը շրտկելու համար:

Մեր Դպրանոցի գործունէութեան մէջ անկարելի է, որ պակասութիւններ չը լինին. բայց կան և շատ յատկանիշներ, որոնք փոխանակ պարտաւանաց արժանի են ամենայն ջատագովութեանց, որոց մասին մի առ մի խօսելը անկարանամ և չը ներէր ինձ ոչ հանգամանքը և ոչ տեղը, բայց չեմ կարող լռելեայն անցնել և այն, որ դժուար գտնուի շատ տեղեր, այն է՝ մեր բոլոր ծառայողաց, սկսեալ մեծարոյ Հոգաբարձուներէն մինչև վերջին պաշտօնէի ցուցած ազգասիրական եռանդն ու ջանքը, որով նուիրած լինելով նոքա իրանց անձն ընծայաբար ազգային կրթութեան գործին, չը նայելով չնչին դրամական վարչութեան, հնարաւոր կանեն Դպրանոցին մրցել պետական միջնակարգ դպրոցներու հետ:

Մեր Դպրանոցի մէջ երևցած անյառաջադիմութեան պատճառներէն մէկը պէտք է համարել և մեր աշակերտաց տնային դաստիարակութիւն չունենալը և կացութեան տգեղ պայմաններն, որոց մասին պատեհ ունեցել եմ յայտնել Հոգաբարձութեան: Մենք յուսով ենք, որ եթէ ապագայում իրագործուի գիշերօթիկ սաներ ունենալու խնդիրը, աւելի քան թէ կիսով չափ կը թեթեւանայ և կը պակասին մեր յառաջադիմութեան գլխաւոր խոչընդոտները: Ո՞վ կարող է ուրանալ, որ բարոյական և մտաւոր զարգացման աստիճանը մեծ ազդեցութիւն ունի սանիկի ընդհա-

նուր դարգացմանը ու դպրոցի բարգաւաճութեան և յառաջադիմութեանը: Մեր դպրոցի աշակերտներէն ոմանք, գալով օտար քաղաքէ և զրհուած լինելով ծնողաց խնամքէն, առանց մեր գիտութեան կը յանձնուին շահամոլ մարդոց ձեռքը, որոնք փոխանակ խնամք տանելու խեղճ երեխային վերայ և նորա ամեն պէտքերը ըստ կարգին հոգալու, բոլորովին անխնամ կը թողուն և պատճառ կը տան շատ անգամ բարոյապէս ևս փչանալու: Վարչութիւնս հնար չունի արժանապէս հսկելու նոցա վերայ և չարեաց առաջն առնելու: Մենք կողմնակի կերպով իմանալով այդ խեղճերու անտանելի վիճակը, աշխատել ենք միշտ դորա առաջն առնելու հրաւիրելով ծնողաց ուշադրութիւնը. բայց աւաղ քանի քանի աշակերտներ զոհ գնացած են անգիտակցաբար իրենց ծնողաց անտարբերութենէն կեղծ խնամակալներու շահախնդրութեանը:

Այս հանգամանքները աչքի առաջ ունենալով, այլ և ի նկատի առնելով, թէ մեր թեմի ուրիշ քաղաքի ժողովուրդներն ևս չունենալով բարեկարգ ազգային դպրոցներ, որտեղ որ կարելի լինէր իրենց զաւակներուն ուսուցանել մայրենի լեզուն և կրօնը՝ ցանկութիւն կը յայտնեն տալ իրենց որդիքը Գալրանոցիս յաշակերտութիւն, և Գալրանոցի վարչութիւնը շատ անգամ ստիպուած է մերժել նոցա խնդիրը շինուածոյ անձկութեան պատճառաւ և որ ցաւալին է՝ Գալրանոցի մէջ գիշերօթիկ սանուց համար սեպհական օթեւանք չունենալուն պատճառաւ, վասն որոյ մեծարոյ Հոգաբարձութիւնը այս տարի որոշեց և վճռեց դորա համար Գալրանոցի շէնքը ընդլայնել, որչափ կարելին է, նշանաւոր շինուած մի ևս դպրոցական տանը կցելով այն պարապ տեղւոյ վերայ, որ քաղաքի հրապարակը կը նայի: Այսպիսի գիտաւորութեամբ Գալրանոցի տան ներքնայարկի մի մասը, որ հրապարակի վերայ է, պէտք է վերածուի խանութներու, որ վարձու տրուին, իսկ միւս մասը բակի վերայ պիտի յարմարցուի գիշերօթիկ սանուց բնակութեան համար, այն ժամանակ և վերնայարկը ամբողջապէս կը բռնեն դասարաններ, դահլիճներ և Գալրանոցը կունենայ ամենայն ինչ դպրոցական յարմարութիւն:

Յիշուած այս շինութիւնը 20 հազար ռուբլի ծախքի կկարօտէր, Հոգաբարձութիւնը որոշած է այդ պէտքին գործածել իր ցայսօր տնտեսած և անցեալ ամի մնացորդ 125000 ռ. գումարը և պակասորդը կյուսայ լրացնել կառուցանելի խանութներու վարձադրամներէն: Երբ սկսուած այդ շինութիւնը գլուխ գայ, այն ժամանակ հարկաւ հոգացողութիւն կլինի և գիշերօթիկ սանուց պահպանութեան համար, անով ևս կաւելանան Դպրոցի բարգաւաճանաց և յառաջադիմութեան միջոցները:

Ի գէտ կհամարիմ՝ յիշել այստեղ, որ ինչպէս յայտնի է, մեր քաղաքացի Խաչերես աղա Խաչիկեան Տեաչքովեանց, 1881 թիւ սեպտեմբերի 1 ին կատարած կտակով աւանդած էր յանձնել մահուանէն ետքը մեր հայ հասարակութեանը 100 հազար ռուբլի գումար, այն նպատակաւ, որ այդ գումարի տոկոսիքովը իւր Տեաչքովեանի անուան սաներ դաստիարակուին մեր Դպրանոցի մէջ և նոցանէ յառաջադէմները աղա խրկուին կատարելագործուելու ուրիշ բարձրագոյն ուսումնարաններ: 1891 թիւ փետրվարի 6 ին կամօքն ամենաբարձրելոյն Աստուծոյ կնքեց իւր կենցաղը մեր երջանկայիշատակ բարերար Տեաչքովեան Խաչերես աղայն: Նորա կտակաւանդած 100 հազար ռուբլի գումարը արդէն ստացուած է, բայց նոյն գումարը համաձայն կտակին՝ արքունի դրամատոմսներու փոխուելուն պատճառաւ, տոկոսեաց գործածութիւնը Տեաչքովեան սաներու պահպանութեան համար պէտք է սկսուի ոչ այս տարի, այլ առաջիկայ 1892—93 ուսումնական ամի սկզբէն:

Գալով մեր Դպրանոցի աշակերտաց 1890—91 ամի ուսումնական ընթացից պատշաճ կհամարիմ՝ մի քանի կարևոր տեղեկութիւններ հաղորդել նոյն տարուայ ուսումնական շրջանի մասին, ապա յարակցել ուսուցչական խորհրդոյ վերջին կարգադրութիւնը, որով աշակերտք փոխադրուած են դասարանէ դասարան:

1890—91 ուսումնարանական տարուայ ընթացքում Դպրանոցը ունեցած է 8 ուսուցչաց ժողով, որոնք ըստ սովորականին նուիրած էին Դպրոցական զանազան խնդրոյ քննութեանը: Բայց սովորական զբաղմունքներէ, որ կվերաբերին աշակերտաց քառորդական յառաջադիմութեան խնդրին, ուսուցչաց ժողովը ի միջի

այլոց պարապած է նաև այն նոր դասագրոց քննութեամբ, որ ուսուցիչներէն ոմանք առաջարկած էին գործադրութեան համար հներու փոխարէն, այդպէս մանրազնին և բազմակողմանի քննադատութիւնէ յետոյ, կարգադրուած է ա. Ռուս. լ. Պատւոյնի ձեռնարկի տեղ ընդունել Բունակովի, “Первинка”, անունով դասագրքի I և II մասեր, պատրաստական դասարանաց համար. բ, II դաս. հայոց լեզուի դասաւանդութեան համար որոշուած է Պ. Կոստանեանի ծաղկաքաղի նիւթը բաւական չհամարելով օգտուել նաև Հ. Ղևոնդ Յովնանեանի ծաղիկ ս. գրոց գրքէն. գ, հայոց պատմութեան Աբովեանի ձեռնարկի փոխարէն գործածել Ս. Պաւստանեանի պատմութեան դասագիրքը, որ թէ իւր ներքին բովանդակութեամբ և թէ լեզուի պատշաճաւորութեամբ շատ բարձր է առաջինէն. դ. Ռուսաց պատմութեան Իլյայսկիի ձեռնարկը փոխարինել “Рождественский”, ի պատմութեան դասագրքով, որ յօրինուած լինելով ի պէտք քաղաքային դպրոցաց իւր բովանդակութեամբ կատարելապէս համապատասխան է մեր աշակերտաց համապատասխանը: